Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի ԹԻՎ ԹԻՎ 18-Ա, 19-Ա ԵՎ 21-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 18-Ա որոշման 1-ին կետում նշված «ավտոմեքենան» բառից հետո լրացնել «աճուրդային եղանակով» բառերը, իսկ 3-րդ կետում՝ «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Թիվ 19-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ էր հղում կատարել նաև «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին:

Որոշման 3-րդ կետում գրառված «առաջարկել» բառը ավելորդ է: Բացի այդ, որոշմամբ չի հաստատվել աճուրդի (մրցույթի) կանոնակարգը՝ հրապարակային սակարկությունների կազմակերպչի սահմանած փաստաթուղթը, որում նախատեսվում են կազմակերպչի կողմից սահմանման ենթակա դրույթները:

Թիվ 21-Ա որոշման բովանդակության մեջ նշված «20120վականի» թիվը փոխարինել «2020 թվականի» թվով և բառով:

Կատարող՝ Ն.Մարտիրոսյան
01.06.2020թ.